ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի
Թալին համայնք, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamayngapetaran@list.ru

ՈՐՈՇՈՒՄ

«12» նոյեմբերի 2024թ. N 2126-Ա

ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-24/128 ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի պահանջներով և պայմանագրի 3.1.4 կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«Էյ Դի Գրուպ» ՍՊԸ-ի հետ 20.09.2024թ-ի կնքված ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-24/128 պայմանագիրը միակողմանի լուծարել:

2.«Էյ Դի Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները, ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-24/128 պայմանագրով իր պարտականությունները չկատարելու համար ներկայացնել լիազոր մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, հիմք տեխնիկական հսկողության ծառայություն իրականացնող կազմակերպության գրությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման օրվա հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ.ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
12 նոյեմբերի 2024թ.